ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017 թվականի նոյեմբերի 22-24-ը Սանկտ Պետերբուրգ գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը

Էմիլ Տարասյան

2. Զբաղեցրած պաշտոնը

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Սանկտ Պետերբուրգ (Ռուսաստանի Դաշնություն), 2017 թվականի նոյեմբերի 22-24-ը

4. Հրավիրող կողմը

Սանկտ Պետերբուրգի Կառավարություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն ս.թ. նոյեմբերի 22-24-ը Սանկտ Պետերբուրգում կայացած «Եվրասիական մարտահրավեր» միջազգային 4-րդ համաժողովին

6. Քննարկված թեմաները

- ԵԱՏՄ դերը 21-րդ դարի գլոբալ աշխարհում,
- Գիտության և ինովացիոն ոլորտում համագործակցությունը՝ որպես ԵԱՏՄ շրջանակում տարածաշրջանային մրցունակության բարձրացման գործոն,
- Բիզնեսի դերը ԵԱՏՄ ինտեգրացիոն գործընթացների զարգացման գործում,
- Զբոսաշրջության զարգացումը՝ որպես ԵԱՏՄ տնտեսությունների զարգացման գործիք,
- Մետաքսե ճանապարհ,

- Մշակութային և գիտական կապերի ընդլայնումը՝ որպես եվրասիական տարածաշրջանում ինտեգրացիոն գործընթացները խթանող գործոն:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Ս.թ. նոյեմբերի 22-24-ը Սանկտ Պետերբուրգում տեղի է ունեցել «Եվրասիական մարտահրավեր» միջազգային 4-րդ համաժողովը, որին հրավիրված էին մասնակցելու եվրասիական ինտեգրման ոլորտի քաղաքագետներ և առաջատար փորձագետներ, եվրասիական ինտեգրման գործընթացի մասնակից երկրների պետական և մասնավոր հատվածների, գիտական և մշակութային հաստատությունների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Համաժողովին մասնակցել և ելույթի խոսքով է հանդես եկել նաև ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ Է. Տարասյանը:

Նախարարի տեղակալն իր ելույթում ընդգծել է, որ ինովացիոն և թվայնացման ոլորտներում համագործակցությունը կարևոր նախադրյալ է հանդիսանում ԵԱՏՄ շրջանակում ինտեգրացիոն գործընթացների արդյունավետ իրականացման համար, ինչը կնպաստի նաև ԵԱՏՄ անդամ-երկրների տնտեսությունների մրցունակության և արտադրողականության մակարդակի բարձրացմանը: Է. Տարասյանը տեղեկացրել է, որ ներկայումս միջազգային և տեղական փորձագետների հետ համատեղ մշակվում է ՀՀ-ում ինովացիոն զարգացման նոր ռազմավարությունը և ճանապարհային քարտեզը և որ այս գործում մեծապես կարևորվում է նաև միջազգային լավագույն փորձի, այդ թվում՝ ԵԱՏՄ անդամ-երկրներում առկա փորձի ուսումնասիրությունը: Նաև նախարարի տեղակալը տեղեկացրել է ՀՀ-ում թվային զարգացման նոր ռազմավարության մշակման, Հայաստանում «Թվային Հայաստան» նոր հիմնադրամի ձևավորման, ինչպես նաև ԵԱՏՄ թվային օրակարգի շրջանակում իրականացվող աշխատանքների մասին՝ ուղղված ԵԱՏՄ անդամ-երկրներում թվային տնտեսությունների զարգացմանը և տնտեսության տարբեր ճյուղերում նորարարական տեխնոլոգիաների ներդրմանը:

«Եվրասիական մարտահրավեր» միջազգային 4-րդ համաժողովի շրջանակում կազմակերպված կլոր սեղանների ընթացքում քննարկվել են եվրասիական ինտեգրմանն առնչվող մի շարք թեմաներ, մասնավորապես, 21-րդ դարի գլոբալ

աշխարհում ԵԱՏՄ դերի, տարածաշրջանային մրցունակության բարձրացման գործում գիտության և ինովացիոն ոլորտում համագործակցության, ԵԱՏՄ ինտեգրացիոն գործընթացների զարգացման գործում բիզնեսի դերի, զբոսաշրջության զարգացման, եվրասիական տարածաշրջանում ինտեգրացիոն գործընթացները խթանելու համար մշակութային և գիտական կապերի ընդլայնման, Մետաքսե ճանապարհի և այլ կարևոր ուղղություններով:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Սանկտ Պետերբուրգ կատարած այցի ընթացքում ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ Է. Տարասյանը հանդիպումներ է ունեցել «Եվրասիական մարտահրավեր» միջազգային 4-րդ համաժողովի մասնակիցների և ԵԱՏՄ պաշտոնատար անձանց հետ, որոնք շրջանակում, Է. Տարասյանը կարևորել է նորարարության, թվայնացման և այլ ոլորտներում ԵԱՏՄ հետ շարունակական համագործակցությունը: Այս ուղղությամբ, ներկայացվել է ՀՀ կողմից վարվող քաղաքականությունը և քննարկվել են համագործակցության հնարավորությունները:

9. Գործուղվողը

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ՝ Էմիլ Տարասյան

10. Ստորագրությունը, ամսաթիվը

27.11.17թ.